պատի հալող, մաշող, թմրեցնող ազդեցութիւնը չէր սպանել նրա կենդանութիւնը, եւ գուցէ Աղթամարայ անապատը ազատ էր այդ ազդեցութիւնից: Ես նոյնը նկատում էի եւ նրա միաբանների մէջ: Դրանք, Կտուց անապատի աբեղաների նման, մշտական աղօթքից եւ ճգնութիւնից բթացած, ապուշ դարձած, դանդաղկոտ մարդիկ չէին. դրանց մէջ երեւում էին կեանքի եւ առողջութեան նշոյլներ: Ոչտունեաց աշխարհը, երկրի բնութեան համեմատ, առաջ էր բերել մի ինքնուրոյն հոգեւորականութիւն: Այստեղ քահանան կրքեր ունէր, գիտէր վրէժխնդիր լինել: Երբ իր սիրած սուրբը չէր կատարում նրա խնդիրքը, նա դադարում էր նրա առջեւ խունկ ծխել եւ մոմ վառել:

Աղթամարայ միաբանները, Կտուց անապատի աբեղաների նման, աշխարհից անջատուած չէին, դրանք, իբրեւ միաբանութիւն մի կաթողիկոսի, աւելի կառավարչական անձանց նշանակութիւն ունէին, շատ անգամ դուրս էին գալիս կղզուց, շրջում էին վիճակներում, իրանց աթոռին պատկանեալ հոգեւոր պտուղը հաւաքելու: Թէեւ Աղթամարայ կաթողիկոսութեան թեմը աւելի փոքր, աւելի սահմանափակ էր, քան Վանայ առաջնորդութիւնը, բայց նա մեծ ուժ ունէր, որովհետեւ ժողովուրդը խիստ սերտ կերպով կապուած էր իր աթոռի հետ: Երբ նրա կաթողիկոսին մի որեւէ վտանգ էր սպառնում, իսկոյն շատախցին, սասունցին ձեռքը տանում էր դէպի իր խենջարը...

Կաթողիկոսից բաժանուելուց յետոյ Ասլանը, մի քանի աբեղաներ հետը առած, սկսեց պտտել կղզու մէջ, դիմեց դէպի հին բերդի աւերակները: Մեր ընկեր Ջալլադը խնդրեց բաց անել վանքի տաճարի դուռը, մտաւ այնտեղ՝ ինչ-որ բաներ քննելու: Իսկ ես շրջում էի տաճարի շուրջը ե՛ւ հիացած, ե՛ւ խորին տխրութեամբ նայում էի պատերի բարձրաքանդակ նկարների վրայ:

Ահա այնտեղ Աբրահամը զոհում է իր անդրանիկին. սիրելի որդու պարանոցի վրայ դրուած է ուխտադիր հօր դանակը: Եհովայի հրեշտակը, երկնքից իջնելով, բռնել է հօր ձեռքը եւ մատով ցոյց է տալիս խոյի վրայ: Ամբողջ պատկերը շնչում է բիբլիական ջերմեռանդութեամբ, երբ նա փրկութիւնը ու քաւութիւնը արեան մէջ էր որոնում: Բայց հրեշտակի մի թեւքը, Աբրահամի այն ձեռքը, որով բռնած ունէր դանակը եւ Իսահակի սիրուն գանգրահեր գլուխը ջարդուած էին: Գեղեցիկ նկարը այլանդակել էր...

Ահա այնտեղ Յովսէփի եղբայրները ծախում են նրան եգիպտացի վաճառականներին. լուռ եւ տխուր դէմքով կանգնած էր հօր սիրելին եւ եղբայրների ատելին մարդավաճառների խումբի մէջ: Յովսէփի գեղեցիկ աչքերը փորած էին, եգիպտացի վաճառականին զրկել էին մի ոտից, եւ այնտեղ չոքած ուղտերի մէկի պարանոցը, միւսի ծնկները փշրել էին: Հրաշալի պատկերի աղէտալի կոտորածն էր միայն մնացել: